


Փոխարժեքը և արժույթի շուկան խնդիրներ

Կիրառական հարց՝ գիտելիքն ամրապնդելու նպատակով

1. «Կրկնակի կշիռների» մեթոդով պարզեք Եվրատարածքի (ԵՏ) արտաքին առևտրում ԱՄՆ-ի և Ճապոնիայի կշիռները (այլ երկրներն անտեսում ենք):



* Ներքին արտադրությունը ներքին շուկայի համար:

Տվյալները մոտ են 2014թ-ին արդյունաբերական արտադրության և առևտրի իրական ցուցանիշներին (մլրդ. ԱՄՆ դոլ.):

Պատասխան

Ներմուծման փոխարինիչների եվրոպական արտադրողները եվրոպական շուկայում մրցում են և՛ ամերիկյան, և՛ ճապոնական արտադրողների հետ:

Եվրոպական շուկայում՝ ներմուծող երկրների հարաբերական կարևորությունը կարող ենք հաշվել ԵՏ-ի ընդհանուր ներմուծման մեջ նրանց հարաբերական կշիռների միջոցով.

ԵՏ-ի ներմուծման մեջ

ԱՄՆ-ի կշիռը $149 / (149 + 44) = 77\%$

Ճապոնիայի կշիռը $44 / (149 + 44) = 23\%$

ԱՄՆ-ի շուկայում (առանց ԵՏ-ի արտադրողների)

ամերիկյան արտադրողների կշիռը $2160 / (2160 + 135) = 94\%$

ճապոնական արտադրողների կշիռը $135 / (2160 + 135) = 6\%$

Ճապոնիայի շուկայում (առանց ԵՏ-ի արտադրողների)

ճապոնական արտադրողների կշիռը $850 / (850 + 66.5) = 93\%$

ամերիկյան արտադրողների կշիռը $66.5 / (850 + 66.5) = 7\%$

ԵՏ-ի արտահանողների համար

ամերիկյան շուկայի կշիռը $221 / (221 + 44) = 83\%$

ճապոնական շուկայի կշիռը $44 / (221 + 44) = 17\%$

ԵՏ-ի արտահանողների համար կրկնակի կշռված

ամերիկյան արտադրողների կշիռը $0.83 \times 94\% + 0.17 \times 7\% = 80\%$

ճապոնական արտադրողների կշիռը $0.17 \times 93\% + 0.83 \times 6\% = 20\%$

ԵՏ-ի
 ներմուծումը 149+44=193
 արտահանումը 221+44=265
 առևտուրը 193+265=458

ԵՏ-ի առևտրում
 ներմուծման կշիռը 193 / 458 = 42 %
 արտահանման կշիռը 265 / 458 = 58 %

ԵՏ-ի առևտրում
 ԱՄՆ-ի կշիռը 0.42 x 77% + 0.58 x 80% = 79 %
 Ճապոնիայի կշիռը 0.42 x 23% + 0.58 x 20% = 21 %

Կիրառական հարց՝ գիտելիքն ամրապնդելու նպատակով

2. Ենթադրենք՝ ԱՄՆ-ի, Եվրատարածքի (ԵՏ) և Ռուսաստանի կշիռները Հայաստանի արտաքին առևտրում համապատասխանաբար 20%, 40% և 40% են (այլ երկրների առկայությունն անտեսում ենք): Հաշվեք դրամի փաստացի փոխարժեքը, եթե հայտնի են հետևյալ տվյալները (իբրև գների փոփոխությունների ցուցանիշ վերցնում ենք սպառողական գների ինդեքսը):

Անվանական փոխարժեքները և գների ինդեքսները

	դրամ/դոլար	դրամ/եվրո	դրամ/ռուբլի	Սպառողական գների ինդեքսը 2014թ-ին	
				Հայաստանում	
2014, հունվար	407.35	554.31	12.04	ԱՄՆ-ում	101.6
2014, դեկտեմբեր	463.53	570.85	8.25	ԵՏ-ում	100.43
Փոփոխությունը (%)	113.8	103	68.5	ՌԴ-ում	111.36

ԵՏ - Եվրատարածք, ՌԴ - Ռուսաստան

Դրամ/դոլար իրական փոխարժեքի ինդեքսը 2014թ-ին.

$$\text{իրական փոխարժեքի ինդեքս} = \text{անվանական փոխարժեքի ինդեքս} \frac{\text{գնանը արտերկրում}}{\text{գնանը Հայաստանում}}$$

$$\epsilon_{r,\$} = 113.8 * (101.6/103) = 112.2$$

2014թ-ին դրամ/դոլար իրական փոխարժեքը բարձրացել է 12.2%-ով:

Փաստորեն՝ դրամը դոլարի նկատմամբ անվանապես արժեզրկվել է 13.8%-ով, իսկ իրապես՝ 12.2%-ով: Իրական արժեզրկումը անվանականից փոքր է եղել, քանի որ գնաճը Հայաստանում եղել է ավելի բարձր, քան ԱՄՆ-ում:

Պարզ օրինակ: Եթե դրամն արժեզրկվել է 10%-ով, և Հայաստանում գները բարձրացել են 10%-ով, իսկ արտասահմանում գները չեն փոխվել, ապա դրամի իրական փոխարժեքը չի փոխվել: Արդյունքում՝ Հայաստանում ներմուծման նկատմամբ պահանջարկը չի փոխվել, և արտասահմանում Հայաստանի արտահանման նկատմամբ պահանջարկը չի փոխվել:

Նույն կերպ կարող ենք հաշվել մյուս արժույթների նկատմամբ դրամի իրական փոխարժեքի ինդեքսները.

Դրամի իրական փոխարժեքի ինդեքսները 2014թ-ին

դրամ/դոլար	դրամ/եվրո	դրամ/ռուբլի
112.2	100.4	74.1

Դրամի անվանական փաստացի փոխարժեքի (ԱՓՓ) ինդեքսը (հաշվարկված երկրաչափական միջինով) հավասար է.

$$ԱՓՓ_{2014} = 113.8^{0.2} * 103^{0.4} * 68.5^{0.4} = 89$$

Այսինքն՝ դրամի անվանական փաստացի փոխարժեքը դոլարի, եվրոյի և ռուբլու զամբյուղի նկատմամբ 2014թ-ին արժևորվել է 11%-ով:

Իսկ դրամի իրական փաստացի փոխարժեքի (ԻՓՓ) ինդեքսը հավասար է.

$$ԻՓՓ_{2014} = 112.2^{0.2} * 100.4^{0.4} * 74.1^{0.4} = 91$$

Այսինքն՝ դրամի իրական փաստացի փոխարժեքի արժևորումը անվանականից փոքր է եղել՝ 9%, ինչը պայմանավորված էր Ռուսաստանում գնաճի բարձր դրույքով:

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի հաշվարկի՝ 2014թ-ին 12 հիմնական առևտրային գործընկեր երկրների արժույթների նկատմամբ դրամի իրական փաստացի փոխարժեքն արժևորվել է 7.2%-ով, իսկ անվանական փաստացի փոխարժեքն արժևորվել է 8.8%-ով: